ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
0010, ՀՀ, ք.Երևան, Զաքիյան 7-2 | (+374 10) 600 701, 600 704 | (+374 10) 600 703 | info@advocates.am | www.advocates.am

18 հուլիսի 2018թ.
№ 01/01/1018-18

ՀՀ արդարադատության նախարար՝
պարոն Արփակ Զեյնալյանին

Հարգելի պարոն Զեյնալյան,

ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության (**այսուհետ՝ Ծառայություն**) հետ փոխհարաբերություններում փաստաբանների մոտ հետևյալ խնդիրներն են ծագում:

Շատ հաճախ փաստաբաններն իրենց կողմից կազմվող դիմումները, միջնորդությունները և այլ փաստաթղթերը, ստորագրելուց հետո, Ծառայության գրասենյակ են ուղարկում օգնականների կամ փաստաբանական գրասենյակի տեխնիկական աշխատակիցների միջոցով:

Ծառայության գրասենյակը (ընդհանուր բաժինը) հրաժարվում է ընդունել նշված փաստաթղթերը՝ պատճառաբանելով, որ այդ փաստաթղթերը պետք է անձամբ ներկայացնի դիմումատուն: Լինում են դեպքեր, երբ այդ փուլում գրասենյակի աշխատակիցները խորհուրդ են տալիս դիմումը լրացնել այլ կերպ: Փաստորեն, Ծառայության գրասենյակի (ընդհանուր բաժնի) աշխատակիցներն այդ պահին գրաքննություն են իրականացնում:

Կարծում ենք, որ Ծառայության գրասենյակի աշխատակիցներն իրավասու չեն այդպիսի պահանջ ներկայացնել, եթե դիմումը ստորագրված է, դիմողի անունը, ազգանունը նշված է և դիմումն ունի հասցեատեր: «Վարչարարության հիմունքների վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը և որևէ այլ օրենք նման իրավունք չեն վերապահում դիմումների ընդունումը տեխնիկապես կազմակերպող աշխատակիցներին:

Հատկանշական է, որ նման արհեստական պահանջներ չեն ներկայացնում Հայաստանի Հանրապետության դատարանների և ՀՀ արդարադատության նախարարության գրասենյակները:

«Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ համապատասխան նախարարը՝

1) կազմակերպում և վերահսկողություն է իրականացնում հարկադիր կատարման ծառայության գործունեության նկատմամբ.

2) ընդունում է հարկադիր կատարման ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ և որոշումներ, տալիս է ցուցումներ.

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք Ձեր ցուցումը ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը՝ դիմումների կամ այլ գրությունների ընդունման փուլում օրենքով չնախատեսված պահանջներ չներկայացնել և արհեստական խոչընդոտներ չստեղծել դիմումների կամ այլ գրությունների հանձնման ժամանակ:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան